# Հետազոտական աշխատանք

| | |
|---|---|
| **Կազմակերպության տվյալներ**<br>• Անվանում, հասցե<br>• Տնօրեն<br>• Էլ.հասցե<br>• Հեռախոս | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ<br>Վահրամ Սողոմոնյան<br>masnakcayindproc@gmail.com<br>+37493581908 |
| | |
| **Հետազոտության թեմա/վերնագիր**<br>• Հետազոտության թեմա | Էքսկուրսիան բնության գրկում,որպես պատկերավոր գրավոր խոսքի զարգացման միջոց 2-րդ դասարանում |
| | |
| **Ուսուցչի տվյալներ**<br>• Անուն, ազգանուն, հայրանուն<br>• Մասնագիտություն<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե<br>• Դասավանդվող առարկաներ<br>• Դասարաններ | Սարգսյան Մարիամ<br>Ալբերտի<br>Դասվար<br>+37477831193<br>Sargsmar57@gmail.ru<br>Մայրենի,Մաթեմատիկա,Ես և շրջակա աշխարհը,Կերպարվեստ,Տեխնոլոգիա,Ե րաժշտություն<br>1-4 |

| **Ուսումնական հաստատության տվյալներ**<br>• Անվանումը, հասցե<br>• Հեռախոս<br>• Էլ. հասցե (տնօրենության)<br>• Web կայքի հասցե | Ստ.Զորյանի անվան թիվ 56 հիմնական դպրոց, Իր. Քոչար 13<br>010228830<br>56school@schools.am<br>https://yerevan56.schoolsite.am |
|---|---|

# Բովանդակություն


**Ներածություն** 3
**Հիմնական բովանդակություն** 4
**Եզրակացություններ, առաջարկություններ** 5
**Օգտագործված գրականության ցանկ** 6
**Հավելվածներ** 7

# Ներածություն

| | |
|---|---|
| **Նպատակը եւ հետազոտական հարցը** | **Հետազոտության հարցը.** Արդյո՞ք էքսկուրսիաները բնության գրկում զարգացնում են պատկերավոր գրավոր խոսքը 2-րդ դասարանում<br>հետազոտության նպատակը՝ |
| | |
| **Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը** | • Լեզվական գրագիտություն<br>• Սովորել սովորելու<br>• Ինքնաճանա-չողական և սոցիալական<br>• Մշակութային |
| | |
| **Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/** | 2-րդ դասարան 26 աշակերտ,13 տղա, 13 աղջիկ: |
| | |
| **Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)** | Հետազոտությունն անցկացրել եմ դիտարկման միջոցով: |

| | |
|---|---|
| **Հետազոտության իրականացման ժամանակահատվածը** | 08.09 – 15.09 2023թ. |
| | |

# Հիմնական բովանդակություն

| | |
|---|---|
| **Գրականության ակնարկ**<br>• Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,<br>• Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:<br><br>**<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>** | «ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ԾՆՈՒՆԴՈՎ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՆՔ.. » **ԷԿՋՅՈՒՊԵՐԻ**<br><br>❖ Էքսկուրսիաների դերն ու նշանակությունը տարրական դպրոցում<br><br>«Էքսկուրսիա» բառը լատիներեն նշանակում է կոլեկտիվ ուղևորություն: Այն լայնորեն տարածվել է 14-րդ դարի սկզբին ինչպես արտասահմանում, այնպես էլ մեզ մոտ: Էքսկուրսիան արտադպրոցական դաստիարակության ճյուղերից մեկն է: Արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, նպատակաուղղված նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը...<br>Արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի դպրոցների, ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակեպությունների միջոցով: |

Յուրաքանչյուր էքսկուրսիա ունի իր հատուկ թեման և նպատակը. ինչն է դրա հիմքը, ինչի վրա է հիմնված պատմությունը:

Մեկ էքսկուրսիան կարող է ունենալ մի քանի նպատակ, օրինակ՝ ցույց տալ քաղաքի պատմական դերը և ծանոթանալ նրա ճարտարապետական առանձնահատկություններին: Բայց նպատակահարմար չէ երեքից ավելի նպատակ դնել, այդ դեպքում կարող ենք նույնիսկ մեկին չհասնել:

Կարևորագույն մեթոդը, որն ընկած է էքսկուրսիայի հիմքում՝ ճանաչողական մեթոդն է: :

Էքսկուրսիաները զարգացնում, ձևավորում, ամրապնդում են մարդու ճանաչողական, ստեղծագործական կարողությունները: Սովորողը կարողանում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել և այդ գիտելիքները ճիշտ կիրառել:

Էքսկուրսիան նպաստում է երեխայի հետազոտական և ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և ամրապնդում են բազմաբնույթ մտածողություն, որոնք ի հայտ են գալիս մարդու ծննդյան պահից:

Էքսկուրսիաներն իրենց կարևոր տեղն ունեն ուսուցման գործընթացն արդյունավետ կազմակերպելու մեջ: Դրանք կիրառվում են տարրական դպրոցից՝ առաջին դասարանից: Յուրաքանչյուր տարիքային խմբում այն

| | |
|---|---|
| | ձևավորվում է յուրովի՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից:<br>Կարևորում եմ նրան ճիշտ և տեղին կազմակերպումը:<br>Այս տարիքային խմբին նպատակահարմար է տանել տիկնիկային թատրոն՝ նախապես ծանոթացնելով ներկայացման գլխավոր թեմատիկային, էթիկայի կանոներին, անձի դրսևորման գործոններին:<br>Այդպես նրանք կկարողանան կողմնորոշվել տարածության մեջ, կզարգացնեն իրենց տեսողական պատկերացումները՝ շրջապատող իրերի և անձանց նկատմամբ:<br>Այս ամենին կհաջորդի տարեվերջյան էքսկուրսիան, որը կազմակեպվում է դեպի բնության գիրկ, պատմական տեսարժան վայր, որն իր տրամաբանական սկիզբն ու ավարտն ունի:<br>էքսկուրսիաները կարող են լինել.<br>• մուտքային<br>• ընթացիկ<br>• ամփոփիչ:<br><br>**Մուտքային** էքսկուրսիաները, ինչպես նաև մուտքային դասերը, նախապատրաստում են ուսումնասիրելու այս կամ այն թեման: Այս էքսկուրսիաների ընթացքում հավաքվում են նյութեր, որոնք էլ հետագայում օգտագործվում են համապատասխան թեմայի ուսումնասիրման ժամանակ: |

**Ընթացիկ** էքսկուրսիաները անցկացվում են նոր թեմայի ուսումնասիրմանը զուգահեռ: Սա հատկապես իրականացվում է, երբ նոր նյութի յուրացումը հնարավոր չէ ապահովել բառային մտապատկերներով: Օգտակար է այն անցկացնել նյութի նախնական ուսումնասիրությունից հետո:

**Ամփոփիչ** էքսկուրսիաներն անցկացվում են թեմայի ուսումնասիրման ավարտին: Նպատակն է սովորեցնել երեխաներին ձեռքբերած գիտելիքները համեմատել շրջապատող երևույթների հետ:

## ❖ Էքսկուրսիայի նպատակը

Էքսկուրսիան ըստ նպատակի լինում է.

- հայրենասիրության դաստիարակություն;
- միջազգային կրթություն;
- աշխատանքային կրթություն;
- գեղագիտական կրթություն;
- բնապահպանական կրթություն;
- երկրի տնտեսության մեջ կարգավորման ձեռքբերումը ցույց տալը.
- բնակավայրի պատմական դերի ցուցադրում;
- ծանոթություն մարզի բնության առանձնահատկություններին.

● հորիզոնների ընդլայնում.

❖ Ժամանակակից երեխայի հիմնախնդիրները

Ժամանակակից երեխան հայտնվում է տեղեկատվության հսկայական սոցիալական տարածքում, որը չունի սահմաններ: Նրա վրա ազդում են ինտերնետի, համակարգչային խաղերի միջոցով ստացած տեղեկատվությունը: Տեղեկատվության այս և այլ աղբյուրների կրթական և սոցիալական ազդեցությունը (միշտ չէ, որ դրական է) հաճախ գերիշխող է կրթության և սոցիալականացման գործընթացում:

Այսօր կա և սրվում է հակամարտությունը երեխայի կողմից դպրոցում գիտելիքների և արժեքների յուրացման բնույթի և դպրոցից դուրս մշակույթի և հակամշակույթի միջև սահմանների ջնջում: Այս հակամարտությունը փոխում է երեխաների մտածողության կառուցվածքը, նրանց ինքնագիտակցությունն ու աշխարհայացքը :

Ժամանակակից երեխան ապրում է ազատության պատրանքով: Վիրտուալ տեղեկատվական միջավայրերում բազմաթիվ տաբուների վերացումը ուղեկցվում է մեծահասակների կողմից երեխայի նկատմամբ վստահության անկմամբ: Երեխաներին մեկուսացնել այն խնդիրներից, որոնց հետ ապրում են մեծերը,

| | |
|---|---|
| | խաթարում է նրանց սոցիալականացումը և զարգացման գործընթացները: Սոցիալիզացիայի իրական ձևերի փոխարինումը վիրտուալներով, երեխաների և մեծահասակների, տարբեր տարիքի երեխաների միջև կապերի թուլացումը հանգեցնում է մանկության ինքնամեկուսացմանը: Դրա արդյունքը երեխաների գիտակցության պրիմիտիվացումն է, ագրեսիվության, դաժանության աճը, որոնք իրականում թաքցնում են վախը, միայնությունը, անորոշությունը և ապագայի մերժումը: Հանրակրթական դպրոցը կոչված է ակտիվորեն հակազդելու այդ բացասական միտումներին: Դրանում առանձնահատուկ դեր է խաղում դասվարը: Լինելով մանկավարժական մշակույթի կրող՝ նա համախմբում է կրթության և սոցիալականացման բոլոր ուղիները, որպիսի պատշաճ կազմակերպի ուսումնական գործընթացը:<br><br>❖ Վիրտուալ էքսկուրսիա |

| | |
|---|---|
| | Սովորողները կարող են ճանապարհորդության գնալ իրենց հյուրասենյակից կամ դասարանից աշխարհի ցանկացած կետ: Պատկերացրեք, որ կարողանաք ցատկել հրաբխի վրայով կամ փորել երկրի խորքը `թանկարժեք գոհարներ պեղելու համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանն իր ազդեցությունն է թողնում նաև մշակութային կյանքի վրա: Առավել հասանելի դառնալու նպատակով աշխարհի լավագույն թանգարանները թվայնացնում են համաշխարհային գլուխգործոցները` դրանք հասանելի դարձնելով արվեստասերների լայն շրջանակին: Վիրտուալ էքսկուրսիան ունի մի շարք դրական առանձնահատկություններ, այն հատկապես հրաշալի օգնություն է հաշմանդամություն ունեցող մարդկանց. Համակարգչային տեխնոլոգիաների և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդկանց փոխհարաբերությունների վերաբերյալ հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ վիրտուալ շրջագայությունները արդյունավետ են տեղեկատվության փոխանցման գործում: Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար դժվար է ճանապարհորդել, ուստի վիրտուալ շրջագայությունը կօգնի նրանց այս հարցում: Աշխարհի լավագույն թանգարանների թվայնացումից հետ չի մնացել նաև Հայաստանը: Այսուհետ կարող ենք |

| | |
|---|---|
| | վիրտուալ ճամփորդություն կազմակերպել դեպի Երևանյան թանգարաններ։ Այս ամենը ունի տարիքային առանձնահատկություն, ի տարբերություն մեծահասակների՝ տարրական դպրոցի աշակերտներին նպատակահարմար չէ տանել վիրտուալ թանգարան: Ավելի արդյունավետ է այս տարիքի երեխաներին տանել իրական էքսկուրսիա: |
| | |
| **Հետազոտության ընթացքը** | Ուսումնասիրության նպատակը՝ պլանավորել աշխատանքը՝ էքսկուրսի, որը զարգացնում է պատկերավոր գրավոր խոսքը 2-րդ դասարանում<br>Ուսումնասիրության առարկա՝ կրտսեր դպրոցականների պատկերավոր գրավոր խոսքի զարգացման գործընթացը 2-րդ դասարանում:<br>Հետազոտության առարկա՝ պատկերավոր խոսքի զարգացման մեթոդներ, տեխնիկա՝ որպես գրավոր խոսքի զարգացման միջոց։<br>Հետազոտական աշխատանքը կատարել եմ դիտարկման մեթոդով:<br>Դասարանում կարդացել եմ «Պարահանդես անտառում» պատմվածքը, սովորողները |

պատմվածքից դուրս են գրել աշունը նկարագրող պատկերավոր խոսքեր: Ապա կատարել եմ հայտորոշիչ գնահատում՝

հանձնանարարել եմ գրել «Ոսկեծամիկ աշուն» կապակցված խոսք: Ավարտից հետո յուրաքանչյուր աշակերտ կարդացել է իր գրածը:

Շարադրանքում պատկերավոր գրավոր խոսք օգտագործել **10 աշակերտ**.



աղյուսակ1

Երեխաների պատկերավոր գրավոր խոսքը զարգացնելու նպատակով կազմակերպում եմ էքսկուրսիա դեպի Բուսբանական այգի՝ դիտելու աշնանային բնության գեղեցկությունը: Այգին շա՜տ գեղեցիկ է լինում հատկապես ուշ աշնանը, երբ գունագեղ աշնանային զգեստներն է հագնում: Շրջեցինք Բուսաբանական այգում, կարծես մի չքնաղ անտառում լինեինք. նեղլիկ արահետները, հսկա ծառերը, իսկ աշնան արևը ծիկրակում էր խիտ ճյուղերի արանքից: Տարբեր կողմերից թռչունների ձայն էր լսվում: Երեխաներին ծանոթացրեցի այգու բույսերի, ծառատեսակների հետ: Ծանոթացան այգու մեծ ջերմոցներին,, որտեղ ոչ միայն

| | |
|---|---|
| | տարբեր տեսակի բույսեր են աճում, այլև ջրավազաններ կան, որտեղ ապրում են ջրաշուշաններ, գորտեր ու կարմիր ձկնիկներ: Երեխաները մեծ ուրախությամբ դիտում են, հիանում և հրճվում: Նրանք երգեցին, պարեցին, գույնզգույն տերևներ հավաքեցին: Երգեցին երգեր աշնան մասին, արտասանեցին «Աշուն» բանաստեղծությունը: Ապա խոտերին նստած, պառկած նկարեցին իրենց տպավորությունները(միջառարկայական կապ) աշունը:<br>Որոշեցինք ոսկեզօծ տերևներ հավաքել, որպեսզի հաջորդ օրը դասարանում բեմադրենք «Պարահանդես անտառում» փոքրիկ պատմությունը։<br><br>Գույնզգույն տերևներով ծածկեցինք դասարանի հատակը, այնուհետև երեխաներին բաժանեցի խմբերի.<br><br>• «Աշնան նկարիչներ»<br>• «Աշնան երգիչներ»<br>• «Աշուն գովերգողներ»<br>• «Աշնան պարողներ»<br><br>«Աշնան նկարիչներ»ը գունագեղ նկարեցին աշունը և պատկերավոր ներկայացրեցին: |

| | |
|---|---|
| | «Աշնան երգիչներ»ը երգեցին իրենց պատկերացրած մեղեդին որի ելևէջների ներքո թափվում են գույնզգույն տերևները:<br><br>«Աշնան պարողնե» ուրախ զվարթ պար ներկայացրեցին, որն ավելի աշխույժացրեց երեխաներին:<br><br>«Աշուն գովերգողներ»ը ներկայացրեցին իրենց իսկ գրած բանաստեղծությունը, որը վերնագրել էին «Աշունը մեր դասարանում»:<br><br>Դասն անցավ համագործակցային մթնոլորտում, բոլորը ներառված էին և մեծ ոգևորությամբ ներկայացրեցին իրենց հանձնարարված առաջադրանքը:<br><br>Այնուհետև կատարում եմ հետևյալ հարցադրումներ.<br><br>1. Ի՞նչ զգացիք տերևների վրա քայլելիս<br>2. Ի՞նչ տեսաք այգում<br>3. Ի՞նչ պատկերավոր բառերով կնկարագրես աշունը:<br><br>Հետո հանձնարարում եմ գրել փոքրիկ շարադրություն նույն «Ոսկեծամիկ աշուն» վերնագրով:<br>Արդյունքում ունեցանք բարելաված ուսուցում: |

| | |
|---|---|
| | 20 աշակերտ իր շարադրանքում օգտագործել էր պատկերավոր խոսք։<br><br>Արդյունքում ունեցանք ատկերավոր գրավոր խոսքի բարելավում **- 10 աշակետ.**<br><br> |
| | |

# Եզրակացություններ, առաջարկություններ

| | |
|---|---|
| **Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին** | Հետազոտությունը տվեց դրական արդյունքը՝ չնայած փոքր ինչ դժվարությունների և խնդիրների, ունեցանք պատկերավոր գրավոր խոսքի զարգացում: Կիրառված մեթոդները ցույց տվեցին, եթե աշխատանքը լինում է բազմաբնույթ, և հաշվի ենք առնում բոլոր երեխաների նախասիրությունները և կարողունակությունները, ապա ունենում ենք դրական տեղաշարժ: Աշխատանքի ընթացքում կատարվեց նաև հայտորոշում և բացահայտվեց երեխաների տարբեր կարողունակություններ՝ երգելու, պարելու, ստեղծագործելու, թատերական, կազմակերպչական... |
| | |
| **Այլ տեղեկատվություն** | |

# Օգտագործված գրականության ցանկ


http://tourfaq.net/excurs/tema-i-zadachi-ekskursii/
https://forum.armedu.am/articles

# Հավելվածներ

| | |
|---|---|
| **Հաշվետվության կցված նյութեր**<br><br>• Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)<br>• Նկարներ<br>• Արդյունքներ | |